



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.2/16853-2025

**ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ԴԱՎԻԹ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ**

Հարգելի՝ պարոն Առաքելյան,

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Խ-1056-22.04.2025-ԴԻ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունները,

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2025 թվականի մայիսի 23-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 437-Ա որոշումը:

Հարգանքով՝

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐԱՑՈՒՄ ՓՈՓՈ-
ԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Խ-1056-22.04.2025-ՊԲ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

«ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ նախագիծ) վերաբերյալ հայտնում ենք հետևյալը.

Նախագծով առաջարկվում է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 136-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 136. Հայոց գեղասպանությունը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կողմից կամ միջազգայնորեն ճանաչված գեղասպանությունը կամ մարդկայնության դեմ ուղղված հանցագործությունները հրապարակայնորեն հերքելը, մեղմացնելը, հավանության տալը, արդարացնելը կամ դրանց վտանգավորությունը նսեմացնելը

1. Հայոց գեղասպանությունը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կողմից կամ միջազգայնորեն ճանաչված գեղասպանությունը կամ մարդկայնության դեմ ուղղված հանցագործությունները հրապարակայնորեն հերքելը, մեղմացնելը, հավանության տալը, արդարացնելը կամ դրանց վտանգավորությունը նսեմացնելը՝

Պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ հարյուր հիսունից երկու հարյուր հիսուն ժամ տևողությամբ, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ մեկից երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը չորս տարի ժամկետով:

2. Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է ուսայական պատկանելության, մաշկի գույնի, ազգային կամ էթնիկ ծագման կամ կրոնական պատկանելության հիման վրա՝ անձի կամ անձանց խմբի նկատմամբ ատելություն, խտրականություն կամ բռնություն հրահրելու նպատակով՝ պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով:

3. Սույն հոդվածի առաջին կամ երկրորդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝

1) հրապարակայնորեն ցուցադրվող ստեղծագործություններով, զանգվածային լրատվության միջոցներով կամ տեղեկատվական կամ հաղորդակցական տեխնոլոգիաներն օգտագործելով կամ

2) իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով՝

պատժվում է ազատազրկմամբ՝ տասից տասնհինգ տարի ժամկետով և որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ հինգ տարի ժամկետով:»

Վերը նշված նախագծի բովանդակային վերլուծությունից պարզ է դառնում, որ որպես հիմնական փոփոխություն, առաջարկվում է առանձնացնել Հայոց ցեղասպանությունը Հայաստանի Հանրապետության կողմից կամ միջազգայնորեն ճանաչված այլ ցեղասպանություններից: Հարկ է նշել, որ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 136-րդ հոդվածի համապատասխան կարգավորումներով, արդեն իսկ պատասխանատվություն են նախատեսում ազգային, ուսայական, էթնիկ կամ կրոնական ատելության հիմքով ցեղասպանությունը և մարդկայնության դեմ ուղղված այլ հանցագործությունները հերքելու, արդարացնելու և դրանք քարոզելով՝ որպես ազգային, ուսայական, էթնիկ կամ կրոնական ատելության կամ անհանդուրժողականության դրսնորման դեմ պայքարի բավարար կառուցակարգեր: Հարկ ենք համարում ընդգծել, որ նշված կարգավորումների ուժով Հայոց ցեղասպանության հրապարակային հերքումը և արդարացումն արդեն իսկ քրեականացված են:

Ենելով ցեղասպանության, որպես մարդկության դեմ ուղղված ծանրագույն հանցագործության բնույթից, գտնում ենք, որ ցանկացած ցեղասպանություն ինքնին հանցագործություն է և պետք է քրեականացվի (և քրեականացված է) ու արժանանա իրավական գնահատման միևնույն հարթության վրա՝ առանց մասնավորեցման և աստիճանակարգման:

Անհրաժեշտ ենք համարում նշել, որ «Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատճելու մասին» կոնվենցիայի (78 Միավորված ազգերի կազմակերպության պայմանագրերի շարք (UNTS) 277) ընդունվել է Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) Գլխավոր ասամբլեայի կողմից 1948 թվականի դեկտեմբերի 9-ին և ուժի մեջ է մտել 1951 թվականի հունվարի 12-ին) 1-ին հոդվածը սահմանում է, որ «Պայմանավորվող կողմերը հաստատում են, որ ցեղասպանությունը, անկախ նրանից՝ կատարվում է խաղաղ, թե պատերազմական պայմաններում, ըստ միջազգային իրավունքի

հանցագործություն է, որը նրանք պարտավորվում են կանխարգելել և պատժել այն կատարելու համար:»:

Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի (այսուհետ՝ ՄԻԵԴ) կամ Դատարան) Փերինչեքն ընդդեմ Շվեյցարիայի (գանգատ թիվ 27510/08) 15.10.2005թ.-ի որոշման 10-րդ և 11-րդ կետերի համադրված վերլուծությունից պարզ է դառնում, որ Դատարանը ևս արձանագրել է, որ՝ «Ժողովրդավարական հասարակությունում նման արարքը քրեականացնելը տվյալ գործի դեպքում Պետության հայեցողական լիազորությունների շրջանակում տեղավորվող հարց է:»:

Այս հանցակազմի կիրառման հիմնական խնդիրը վերաբերում է նրան, թե ինչպես է այն հարաբերակցվում ՄԻԵԿ 10-րդ հոդվածով երաշխավորված խոսքի ազատության իրավունքի հետ:

Խնդրու առարկա հանգամանքի կապակցությամբ ուշագրավ պետք է համարել նաև «Ըստրականության բոլոր ձևերի վերացման մասին» 21.12.1965 թ.-ի կոնվենցիան (այսուհետ նաև՝ Կոնվենցիա), որի համաձայն՝ «Միավորված ազգերի կազմակերպության Կանոնադրությունը հիմնված է բոլոր մարդկանց ներհատուկ արժանապատվության և հավասարության սկզբունքների վրա և որ Կազմակերպության անդամ բոլոր պետությունները պարտավորվել են, համագործակցելով Միավորված ազգերի կազմակերպության հետ, ձեռնարկել համատեղ և առանձին գործողություններ՝ իրականացնելու Միավորված ազգերի կազմակերպության նպատակներից մեկը, այն է բոլորի համար, առանց ուսայի, սեռի, լեզվի ու կրոնի հիմքով տարբերակման խրախուսելու և զարգացնելու մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների նկատմամբ համընդհանուր հարգանքն ու դրանց պահպանումը, համարելով, որ Մարդու իրավունքների համընդհանուր հոչակագիրն ազդարարում է, որ բոլոր մարդիկ ծնվում են ազատ և իրենց արժանապատվությամբ ու իրավունքներով հավասար և որ յուրաքանչյուր մարդ օժտված է այդ Հոչակագրում ամրագրված իրավունքներով ու ազատություններով առանց որևէ տարբերակման, մասնավորապես, ուսայի, մաշկի գույնի կամ ազգային ծագման հիմքով, համարելով, որ բոլորը հավասար են օրենքի առջև և ունեն ամեն խտրականությունից ու խտրականության հրահրումից օրենքով հավասարապես պաշտպանվելու իրավունք (...):»:

Կոնվենցիայի 1-ին հոդվածի համաձայն՝ «1. Սույն Կոնվենցիայում «ոսասայական խտրականություն» հասկացությունը նշանակում է ուսայի, մաշկի գույնի, ցեղային, ազգային կամ էթնիկական ծագման հատկանիշների հիմքով ցանկացած տարբերակում,

բացառում, սահմանափակում կամ նախապատվություն, որոնք ունեն քաղաքական, տնտեսական, սոցիալական, մշակութային կամ հասարակական կյանքի ցանկացած այլ բնագավառում մարդու իրավունքներն ու հիմնարար ազատությունները չեղյալ հայտարարելու կամ դրանց ճանաչումը, օգտագործումը կամ իրականացումը նվազեցնելու նպատակ կամ հանգեցնում են նման հետևանքների»:

«Խտրականություն» բառն իր բացատրությունն է գտել նաև Է. Աղայանի բացատրական բառարանում, որտեղ հիշյալ եզրույթը բացատրվում է իր երկու իմաստով. 1) իրավունքների անհավասարություն ըստ ազգային՝ ուսայական կամ այլ տարրերությունների, 2) իրավական տեսակետից ոչ միատեսակ վերաբերմունք հավասար մարդկանց նկատմամբ, ջոկողություն: Խտրականությունն ի հայտ է գալիս, երբ անհատները կամ կառույցներն անարդարացիորեն մարդուն զրկում են ինքնադրսնորվելու հնարավորությունից, հենվելով խարանի վրա: Խտրականության արդյունքում անձը կարող է մեկուսացվել հասարակությունից: Այսպիսի իրավիճակ կարող է ստեղծվել, երբ մարդուն զրկում են քաղաքացիական իրավունքներից, աշխատանքի և կրթություն ստանալու հնարավորությունից, բնակության վայրից, հանրային կյանքին մասնակցելու իրավունքից և այլն:

«Անձանց նկատմամբ, անկախ ուսայական և էթնիկական ծագումից, հավասար վերաբերմունքի սկզբունքը կիրառելու մասին» ԵՄ հրահանգի 2-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ ուղղակի խտրականության դրսնորման դեպք է համարվում, եթե «որևէ անձի նկատմամբ ուսայական կամ էթնիկական ծագման հիման վրա ցուցաբերվել է ավելի վատ վերաբերմունք, քան այն վերաբերմունքը, որը նմանատիպ իրավիճակում ցուցաբերվել է, ցուցաբերվում է կամ կցուցաբերվեր մեկ այլ անձի նկատմամբ»:

Դատարանը գործով արձանագրել է, որ «Խտրականությունն էապես նման իրավիճակում գտնվող անձանց նկատմամբ տարրեր վերաբերմունքի դրսնորում է՝ առանց որևէ օրենկութիւն հիմքերի և որևէ ողջամիտ բացատրության»:

Այս համատեքստում պետք է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության (այսուհետ նաև՝ ԵԱՀԿ) մասնակից պետությունները հանձն են առել «հարգել մարդու իրավունքները և հիմնարար ազատությունները (...) բոլորի համար առանց ուսասակ, սերի, լեզվի կամ կրոնի հատկանիշով տարրերակման», (...) գույնի, քաղաքական կամ այլ կարծիքի, ազգային կամ սոցիալական ծագման, գույքային վիճակի, ծննդի կամ այլ կարգավիճակի տարրերակման», և համաձայնել են, որ «այս իրավունքներից ու ազատություններից

օգտվող, դրանցից օգտվելու մտադրություն հայտնող կամ օգտվել ձգտող ոչ մի անհատ կամ նրա ընտանիքի անդամ դրա հետևանքով չի ենթարկվի որևէ տեսակի խտրականության» միևնույն ժամանակ հանձնառություն ստանձնելով ապահովել «օրենքով հավասար պաշտպանություն» և «ցանկացած հիմքով խտրականությունից հավասար և արդյունավետ պաշտպանություն»:

ՄԻԵԴ-ի ձևակերպմամբ «նմանատիպ կամ գրեթե նույն իրավիճակում գտնվող անձանց նկատմամբ չպետք է լինի տարրեր վերաբերմունք՝ հիմնված նրանց որոշակի հատկանիշների վրա»:

Վիեննայի փաստաթուղթը նաև շեշտում է, որ ԵԱՀԿ մասնակից բոլոր պետությունները հանձնառու են ապահովել իրենց տարածքում և իրենց ընդդատության ներքո յուրաքանչյուր մարդու իրավունքները և հիմնարար ազատությունները, առանց այնպիսի հատկանիշներով որևէ տարրերակման, ինչպիսիք են ռասան, գույնը, սեռը, լեզուն, կրոնը, քաղաքական կամ այլ կարծիքը, ազգային կամ սոցիալական ծագումը, գույքային վիճակը, ծնունդը կամ որևէ այլ կարգավիճակ:

Վերը նշված փաստաթղթերի հիման վրա անդամ պետությունները պարտավորություն են ստանձնել «ապահովել իրավահավասարությունը»: Ավանդաբար, այս հասկացությունն ընկալվել է որպես պետական իշխանությունների պարտք՝ ապահովելու օրենքի հավասար կիրարկումը: Ցանկացած ոք, ով հայտնվում է պետական պաշտոնյաների/մարմինների առջև, պետք է արժանանա հավասար վերաբերմունքի:

Վերը նշված իրավական ակտերի, ինչպես նաև Դատարանի կողմից արված արձանագրումների լույսի ներքո՝ վերլուծելով Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի համապատասխան կարգավորումները, կարող ենք հստակ փաստել, որ օրենսդիրը, հաշվի առնելով քննարկող հանցակազմի կարևորությունը և վտանգավորությունը, քննարկվող հանցագործության համար նախատեսել է քրեական պատասխանատվություն և սահմանել է բավարար կառուցակարգեր, որոնք թույլ են տալիս ապահովել այնպիսի հիմնարար և առաջնային բարիքների պաշտպանությունը, ինչպիսիք են ազգային, էթնիկական, ռասայական կամ կրոնական խմբերի գոյությունը, անվտանգությունը և այլն:

Հարկ է փաստել, որ ՀՀ քրեական նոր օրենսգրքի 136-րդ հոդվածը պատասխանատվություն է նախատեսում ցեղասպանությունը կամ մարդկայնության դեմ ուղղված հանցագործություններն ինչպես իրավարակայնորեն հերքելու, արդարացնելու,

դրանց վտանգավորությունը նսեմացնելու համար, այդպես էլ դրանք քարոզելու համար, որը նախատեսված չէ առաջարկվող Նախագծում:

Այսպիսով՝ կարող ենք հստակ փաստել, որ Օրենսդրի կողմից արդարացիորեն արդեն իսկ քրեականացվել են ցեղասպանությունը և խաղաղության ու մարդկության անվտանգության դեմ ուղղված մյուս հանցագործությունները հերքելը, մեղմացնելը, դրանց հավանություն տալը կամ արդարացնելը, ուստի պետությունը ձեռնարկել է բոլոր անհրաժեշտ և բավարար միջոցներն այդ հանցագործությունները քրեականացնելու և համապատասխան պատասխանատվություն նախատեսելու ուղղությամբ:

Կարող ենք արձանագրել, որ Հայոց ցեղասպանությունը՝ Հայաստանի Հանրապետության կողմից կամ միջազգայնորեն ճանաչված ցեղասպանություններից կամ մարդկայնության դեմ ուղղված հանցագործություններից առանձնացնելու դեպքում ըստ էության կցուցաբերվի անհավասար մոտեցում մարդկության դեմ ուղղված ամենավտանգավոր հանցագործությունների դեմ պայքարի տեսանկյունից: Քրեական օրենսգրքում նման ձևակերպմամբ կետ նախատեսելը չի բխի Հայաստանի Հանրապետության կողմից վավերացրած միջազգային մի շարք իրավական ակտերի դրույթներից, որոնցով Հայաստանի Հանրապետությունը ստանձնել է պարտավորություն բոլորի համար, առանց ուսայի, սեռի, լեզվի ու կրոնի հիմքով տարբերակման, խրախուսելու և զարգացնելու մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների նկատմամբ համընդհանուր հարգանքն ու դրանց պահպանումը, ինչպես նաև խտրականության բոլորի ձևերի բացառումը:

Մարդկության պատմության մեջ հառացած այնպիսի «չարիքի» պայքարում, ինչպիսինն է ցեղասպանությունը, տարբերակված մոտեցում դրսևորելն ոչ միայն չարդարացված խտրական մոտեցման է հանգեցնում, այլ ըստ էության, նման հանցակազմի որակյալ հատկանիշի սահմանումը վերածվում է քաղաքական գործնթացում օգտագործվող «գործիքի», որի նախատեսումն, անշուշտ, չի բխում քրեաիրավական գերնպատակների բովանդակությունից: Այլ կերպ՝ հանցակազմի այս կամ այն տեսակի սահմանումն ուղղված է հասարակության մեջ առկա արատավոր բնույթ կրող և հանրության համար վտանգավորություն ներկայացնող դրսևորումները զսպելուն, կանխելուն և դրաց հետևանքները վերացնելուն: Մինչդեռ, երբ քրեաիրավական գործիքակազմը դուրս է մղվում այս առաջնային գաղափարից և ուղղվում այլ նպատակների իրագործմանը, ապա ոչ միայն խախտվում է իրավունքի ճյուղային

կառուցվածքի տրամաբանությունը, այլև բուն նպատակները, որին ձգտում է Օրենսդիրն այս կամ այն ակտն ընդունելով:

Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ նշանակվում է արդարացի պատիժ, որը որոշվում է սույն օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածի սանկցիայի սահմաններում՝ հաշվի առնելով սույն օրենսգրքի Ըստիանուր մասի դրույթները»:

Նույն օրենսգրքի 55-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Պատժի նպատակներն են՝ վերականգնել սոցիալական արդարությունը, վերասոցիալականացնել պատժի ենթարկված անձին և կանխել հանցագործությունները»:

Պատժի նպատակներն այն վերջնական արդյունքներն են, որոնց ձգտում է հասնել պետությունը հանցանքի կատարման մեջ մեղավոր ճանաչված անձին պատժի ենթարկելով:

Պատժի նպատակների մեջ օրենսդիրն առաջինը սահմանում է սոցիալական արդարության վերականգնումը: Պատիժն այս պարագայում հանդիսանում է սոցիալական արդարության վերականգնման յուրօրինակ քրեափրավական միջոց:

Քրեափրավական սանկցիայի «Վերականգնողական» բնույթը սերտորեն կապված է հանցագործությամբ խախտված իրավունքների և ազատությունների առանձնահատկությունների հետ:

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը թիվ ԵԿԴ/0042/01/11 գործով 2011 թվականի դեկտեմբերի 22-ի որոշման 15-րդ կետով արձանագրել է, որ՝ «(...) պատժի նշանակման օրինականության սկզբունքի իմաստով հանցանք կատարած անձի նկատմամբ կարող են կիրառվել պատժի միայն այն տեսակները, որոնք անմիջականորեն նախատեսված են ՀՀ քրեական օրենսգրքով: Պատժի տեսակների սպառիչ ցանկի օրենսդրական սահմանումը նշանակում է, որ դատարանը հանցագործություն կատարած անձի նկատմամբ չի կարող նշանակել այդ ցանկով չնախատեսված պատիժ»:

Մեկ այլ գործով Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը արձանագրել է, որ՝ «Պատիժ նշանակելիս օրինականության սկզբունքն արտահայտվում է նրանում, որ պատժի տեսակը և չափը որոշվում է ՀՀ քրեական օրենսգրքի Հատուկ մասի այն հոդվածի սանկցիայով, որի դիսպոզիցիայի հատկանիշներին համապատասխան անձը մեղավոր է ճանաչվել հանցագործության մեջ (ՀՀ վճռաբեկ դատարանի 2007 թվականի օգոստոսի 30-ի որոշումը ՎԲ-145/07 գործի վերաբերյալ)»:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է նաև, որ՝ «Նշանակվող պատիժը չի կարող հոդվածի սանկցիայում նախատեսված պատժի առավելագույն կամ նվազագույն չափից ավելի խիստ կամ մեղմ լինել, այսինքն դուրս գալ հատուկ մասի հոդվածի սանկցիայի սահմաններից։ Այդ պահանջից բացառություն կարող է անել միայն ՀՀ քրեական օրենսգիրքը, որի Ըսդհանուր մասում նախատեսված հատուկ նորմերի ուժով դատարանին իրավունք է վերապահում դուրս գալ այդ սահմաններից (ՀՀ վճռաբեկ դատարանի 2007 թվականի հոկտեմբերի 26-ի որոշումը ՎԲ-185/07 գործի վերաբերյալ):»։

Պատիժ նշանակելիս կարևոր նշանակություն ունի նաև պատժի անհատականացման գաղափարը, համաձայն որի անձի նկատմամբ պետք է նշանակվի այնպիսի պատիժ, որն ի զորու է նրա մոտ ձևավորել իրավահպատակ վարքագիծ, վերասոցիալականացնել հանցագործություն կատարած անձին և իրագործել պատժի՝ քրեական օրենսգրքով նախատեսված մյուս նպատակները։

Այս մասով ևս Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ՝ «Պատժի անհատականացման սկզբունքի իմաստով դատարանի խնդիրն է հանցանք կատարած անձի նկատմամբ կոնկրետ հանցակազմի սանկցիայի սահմաններում նշանակել կոնկրետ պատիժ։ Կոնկրետ պատժի նշանակումը դատարանի համար խիստ կարևոր և պատասխանատու խնդիր է, որի լուծման համար մեծ նշանակություն ունի պատժի անհատականացման կարգի և չափանիշների հարցը։

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ պատժի անհատականացումն անհրաժեշտ է դիտարկել երկու տեսանկյունից՝

1) պատժի անհատականացում օրենքում։ Վերջինս ենթադրում է ՀՀ քրեական օրենսգրքի նորմերում արտահայտված ընդհանուր դրույթների առկայությունը, որոնք դատարանը պարտավոր է հաշվի առնել հանցանք կատարած անձի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի սանկցիայի շրջանակներում պատիժ նշանակելիս։

2) պատժի անհատականացում դատարանում։ Վերջինս ենթադրում է կոնկրետ անձի նկատմամբ պատիժ սահմանելիս ՀՀ քրեական օրենսգրքի Ըսդհանուր և Հատուկ մասերի դրույթների կիրառում՝ հաշվի առնելով հանցավորի անձի առանձնահատկությունները, հանցագործության կատարման հանգամանքները, ինչպես նաև պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները։

ՀՀ քրեական օրենսգրքը չի բովանդակում բոլոր այն հանգամանքների սպառիչ ցանկը, որոնք պետք է հաշվի առնելն դատարանի կողմից կոնկրետ հանցագործության համար պատիժ նշանակելիս։ Օրենսգրքը, սակայն, դատարանին տալիս է պատժի

անհատականացման ընդհանուր չափանիշներ, որոնց հիման վրա դատարանը կարող է նշանակել արդարության պահանջներին համապատասխանող պատիճ: Նշված չափանիշներն են:

ա) հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանն ու բնույթը, ընդհանրապես, կոնկրետ հանցագործության կատարման հանգամանքների տեսանկյունից մասնավորապես,

բ) հանցավորի անձը,

գ) պատասխանատվությունն ու պատիճը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները (ՀՀ վճռաբեկ դատարանի 2011 թվականի դեկտեմբերի 22-ի որոշումը ԵԿԲ/0042/01/11 գործի վերաբերյալ, 17-րդ կետ):»:

Հաշվի առնելով վերը նշված հանգամանքները, կարծում ենք, որ նպատակահարմար չէ, Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 136-րդ հոդվածի սանկցիայում կատարել Նախագծով առաջարկվող փոփոխությունը:

Ավելին, Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքն իր կարգավորումներում հստակ ընդգծում է ցեղասպանության կամ մարդկայնության դեմ ուղղված հանցագործությունների վտանգավորությունը և դրանց դեմ քրեական արդարադատության ամենախիստ դրսնորումներով պայքար մղելու անհրաժեշտությունը:

Դրա վառ օրինակ է Քրեական օրենսգրքի 136-րդ հոդվածը, որով պատասխանատվությունը է սահմանվում ցեղասպանության համար, այն է՝ «Ցեղասպանությունը կամ մարդկայնության դեմ ուղղված հանցագործությունները հրապարակայնորեն հերքելը, արդարացնելը, դրանք քարոզելը կամ դրանց վտանգավորությունը նսեմացնելը, եթե դա կատարվել է ուսայական պատկանելության, մաշկի գույնի, ազգային կամ էթնիկ ծագման կամ կրոնական պատկանելության հիման վրա՝ անձի կամ անձանց խմբի նկատմամբ ատելություն, խտրականություն կամ բռնություն հրահրելու նպատակով»: Համանման կարգավորումներ են նախատեսված մի շարք Եվրոպական երկրներում, օրինակ՝ Շվեյցարիայում, Գերմանիայում:

Վերը նշված հոդվածով հանցակազմի ծանրացնող հանգամանքներ են դիտվում, երբ արարքը, որը կատարվել է՝

«1) հրապարակայնորեն ցուցադրվող ստեղծագործություններով, զանգվածային լրատվության միջոցներով կամ տեղեկատվական կամ հաղորդակցական տեխնոլոգիաներն օգտագործելով կամ

2) իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով»:

Այսպիսով, Քրեական օրենսգրքում հնարավորինս մանրամասն կանոնակարգում են ստացել ցեղասպանության կամ մարդկայնության դեմ ուղղված հանցագործությունները, ինչպես նաև հստակեցվել են այս հանցագործությունների հատկանիշները, դրանց համար քրեական պատասխանատվության ենթարկելու պայմանները:

Միաժամանակ հարկ ենք համարում նշել, որ Նախագծում առկա «Միջազգայնորեն չճանաչված ցեղասպանություն» հասկացությունը խնդրահարույց է իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքի համատեքստում, քանի որ տվյալ պարագայում պարզ չի դառնում, թե որ միջազգային ատյանի կողմից ճանաչված ցեղասպանության մասին է խոսքը:

Ենելով վերոգրյալից՝ գտնում ենք, որ Նախագծով առաջարկվող փոփոխությունների նպատակահարմարությունը բացակայում է:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 437 – Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի տեղակալ Գևորգ Քոչարյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (Խ-1056-22.04.2025-ԴԻ- 011/0) քննարկելիս Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Տ. ԽԱԶԱՏՐՅԱՆ

Երևան

23.05.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԵԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՁՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2021 թվականի մայիսի 5-ի քրեական օրենսգրքի 136-րդ հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«Հոդված 136. Հայոց ցեղասպանությունը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կողմից կամ միջազգայնորեն ճանաչված ցեղասպանությունը կամ մարդկայնության դեմ ուղղված հանցագործությունները հրապարակայնորեն հերթելը, մեղմացնելը, հավանության տալը, արդարացնելը կամ դրանց վտանգավորությունը նսեմացնելը»

1. Հայոց ցեղասպանությունը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կողմից կամ միջազգայնորեն ճանաչված ցեղասպանությունը կամ մարդկայնության դեմ ուղղված հանցագործությունները հրապարակայնորեն հերթելը, մեղմացնելը, հավանության տալը, արդարացնելը կամ դրանց վտանգավորությունը նսեմացնելը՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ հարյուր հիսունից երկու հարյուր հիսուն ժամ տետողությամբ, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ մեկից երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը չորս տարի ժամկետով:

2. Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է ռասայական պատկանելության, մաշկի գույնի, ազգային կամ էթնիկ ծագման կամ կրոնական պատկանելության հիման վրա՝ անձի կամ անձանց խմբի նկատմամբ ատելություն, խորականություն կամ բռնություն հրահրելու նպատակով՝

պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով:

3. Սույն հոդվածի առաջին կամ երկրորդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝

1) հրապարակայնորեն ցուցադրվող ստեղծագործություններով, զանգվածային լրատվության միջոցներով կամ տեղեկատվական կամ հաղորդակցական տեխնոլոգիաներն օգտագործելով կամ

2) իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով՝

պատժվում է ազատազրկմամբ՝ տասից տասնհինգ տարի ժամկետով եւ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ հինգ տարի ժամկետով:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՅՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1. Ընթացիկ իրավիճակը եւ իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը

Հայաստանի Հանրապետության 23.08.1990 թվականի անկախության հոչակագրի 11-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունը սատար է կանգնում Օսմանյան Թուրքիայում եւ Արեւատյան Հայաստանում Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչմանը, իսկ 12-րդ կետի համաձայն հոչակագիրը հիմք է սահմանդրության եւ հանրապետության օրենսդրության մշակման, ինչպես նաև պետական մարմինների գործունեության համար:

Ինչպես ամրագրված է ՀՀ Սահմանդրության նախարանում, այն ընդունվում է՝ հիմք ընդունելով անկախության հոչակագրում հաստատված Հայոց պետականության հիմնարար սկզբունքները եւ համազգային նպատակները, հիմնական օրենքով փաստելով պետականորեն Ցեղասպանության միջազգային ճանաչման ու դատապարտման ուղղագի ամրագրումը:

Հատկանշական է, որ դեռեւ 1988 թ. նոյեմբերի 22-ին ՀԽՍՀ Գերագույն խորհուրդն ընդունել է օրենք «Օսմանյան Թուրքիայում հայերի 1915 թվականի ցեղասպանության դատապարտման մասին» եւ ապրիլի 24-ը հայտարարել «Հայերի ցեղասպանության զոհերի հիշատակի օր»:

Թեեւ գործող ՀՀ քրեական օրենսգրքի 136-րդ հոդվածը սահմանում է ցեղասպանության հերքման պատասխանատվության դրույթ, սակայն այն չունի հատուկ մոտեցում Հայոց Ցեղասպանությանը, ինչը կարծում ենք այս դեպքում արդարացված չէ, քանի որ նախ բազմաթիվ երկրներ ու միջազգային կազմակերպություններ արդեն իսկ ճանաչել եւ դատապարտել են հայ ժողովրդի հանդեպ իրականացված այս ոճրագործությունը: Բացի այդ, ուսումնասիրելով միջազգային փորձը, հարկ է արձանագրել, որ ցեղասպանությունը հերքելը, մերժելը կամ ուրանալը քրեորեն պատժելի արարք է համարվում աշխարհի շատ երկրներում:

Այս առումով հարկ է նշել, որ Եվրոպական միությունը 2008թ փետրվարի 26-ին ընդունված 16771/07 օրենսդրական ակտ կամ այլ գործիքներ փաստաթղթով հորդորում է անդամ երկրներին հարմոնիզացնել եւ քրեորեն պատժելի արարք համարել մարդկության դեմ ուղղված հանցագործությունները, ներառյալ ցեղասպանությունը, հրապարակայնորեն քաջալերելը, ժխտելը, հերքելը, մերժելը, ուրանալը եւ այլն:

2. Առաջարկվող կարգավորման բնույթը

Հայոց պատմության քառուղիներում Հայոց ցեղասպանությունը ամենաորերգական ու չսպիացող վերքն է: Հայ ժողովրդի բնաջնջունից բացի, տեղի ունեցավ նաև հայրենազրկում: Այն իր ծավալով ու հրեշային ծրագրով աննախադեպ էր նաև համաշխարհային պատմության ընթացում:

Ցավոք, ժամանակին Հայոց ցեղասպանության անպատճեիլությունն ու ժխտողականությունը հանգեցրեցին մարդկության դեմ նորանոր ոճիրների:

Մասնավորապես, ինչպես ներկայացված է Միացյալ Նահանգների Հոլոքոստի թանգարանում, Արոֆ Հիտլերը 1939 թ. Լեհաստանի վրա հարձակումը հրահանգելու ժամանակ ի չիք դարձրեց բոլոր առարկություններն՝ ասելով. «Ի վերջո, ո՞վ է այսօր խոսում հայերի ոչնչացման մասին»՝ հիմք դնելով հրեաների ցեղասպանության համար:

Ռաֆայել Լեմկինը, որը սահմանեց «ցեղասպանություն» եզրույթը եւ որը կանգնած էր ՄԱԿ-ի «Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու եւ պատժելու մասին» կոնվենցիայի ակունքներում, Հայոց ցեղասպանությունը վկայակոչում էր որպես 20-րդ դարի առաջին ցեղասպանություն:

Հայոց ցեղասպանության առանձնահատկությունը կայանում է նրանում, որ այն իրագործվել է այդ հանցագմի օբյեկտիվ կողմին ներհատուկ բոլոր ձեւերի գործադրմամբ՝ նպատակ ունենալով հայ ժողովրդի բնաջնջմամբ տեր դառնալ նրա բնօրրանին: Բացի այդ, Հայոց ցեղասպանության հերքում, ի տարբերություն մյուս ցեղասպանությունների, որոնք իրականացվում են հիմնականում մասնավոր անձանց կամ

կազմակերպությունների կողմից, կատարվում է որոշ պետությունների (Թուրքիա, Ադրբեյջան եւ այլն) պաշտոնական եւ բազմակողմանի աջակցությամբ: Նրանք խոշոր միջոցներ են ծախսում այդ նպատակով՝ ներգրավելով նաև այլ պետական կառույցների, հասարակական կազմակերպությունների, կրթական ու գիտական հաստատությունների, քաղաքական գործիչների ու այլ անձանց:

Հետեւաբար, սույն նախագծով սահմանվում է քրեական պատասխանատվության դրույթ՝ հատուկ Հայոց ցեղասպանության հերթման համար, որը բխում է նաև Հայաստանի Հանրապետության եւ հայ ժողովրդի անվտանգության նկատառումներից:

3. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները, անձինք եւ նրանց դիրքորոշումը

Նախագիծը մշակվել է <<ԱԺ «Հայաստան» խմբակցության կողմից:

4.Ակնկալվող արդյունքը

Առաջարկվող նախագծի ընդունումը հատկապես իրատապ է ներկայումս Հայոց ցեղասպանությունը ուրանալու բազմաթիվ փորձերի լուսի ներքո: Այն համահունչ Ալինի Եվրոպական օրենսդրությանը եւ օրենսդրորեն կամրապնդի Հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման գործընթացը: